ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N5

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝	Կ. Բաբինյան
Հանձնաժողովի անդամներ՝	Գ. Անտոնյան, Տ. Սարգսյան, Ա. Խառատյան, Զ. Գեդելյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ի. Եղիազարյան

1. Գնահատող հանձնաժողովի նիստի մասին

/ Կ. Բաբինյան /

1.1. Ընդունել ի գիտություն, որ N4 արձանագրությունում նշված մասնակիցների կողմից շտկվել են առկա անհամապատասխանությունները: Գնահատող հանձնաժողովը՝ ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 42-րդ կետով, որոշեց մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Բանակցությունների անցկացման անհրաժեշտության մասին

/ Կ. Բաբինյան /

2.1 Գանահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, համաձայն որի «եթե բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա.», որոշեց նիստը կասեցնել է և մեկ աշխատանքային օրվա ընթացքում բավարար գնահատված մասնակիցներին էլեկտրոնային ձևով ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

/ Կ. Բաբինյան /

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել **20.03.2020թ. ժամը 11:00-ին**, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ 321/1 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի. Նախագահ՝		Կ. Բաբինյան
Անդամներ՝		Գ. Անտոնյան
		Տ. Սարգսյան
		Ա. Խառատյան
		Զ. Գեդելյան
Քարտուղար՝		Ի. Եղիազարյան